**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ** N__**Վ**/14

**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

*24 դեկտեմբեր 2025 թվական*

| | |
|---|---|
| **ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝**<br>Վարչապետ (խորհրդի նախագահ) | Ն. Փաշինյան |
| **ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (Խորհրդի անդամներ)՝** | |
| Բարձրագույն դատական խորհրդի նախագահ | Ա. Աթաբեկյան |
| Փոխվարչապետ | Մ. Գրիգորյան |
| Վարչապետի աշխատակազմի ղեկավար | Ա. Հարությունյան |
| Արդարադատության նախարար | Ս. Գալյան |
| Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ | Վ. Վարդանյան |
| Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ | Ռ. Բաքոյան |
| Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար | Ա. Հովհաննիսյան |
| Վճռաբեկ դատարանի նախագահ | Լ. Թադևոսյան |
| Գլխավոր դատախազ | Ա. Վարդապետյան |
| Քննչական կոմիտեի նախագահ | Ա. Պողոսյան |
| Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ | Ա. Նահապետյան |
| Մարդու իրավունքների պաշտպան | Ա. Մանասյան |
| Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող | Մ. Գալստյան |
| Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի պարտականությունները կատարող | Ռ. Բազիկյան |
| Արդարադատության նախարարի տեղակալ | Գ. Քոչարյան |

| | |
|---|---|
| **Խորհրդի անդամ հասարակական կազմակերպություններ՝** | |
| «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն | Ս. Այվազյան |
| «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար | Ա. Սաքունց |
| «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ | Կ. Զադոյան |
| «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող | Դ. Իոաննիսյան |
| «Հայաստանի գործատուների հանրապետական միություն» հասարակական կազմակերպության նախագահ | Վ. Համբարձումյան |
| **Խորհրդի հրավիրյալ մասնակիցներ՝** | |
| Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար | Դ. Խուդաթյան |
| Ազգային ժողովի պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն | Ա. Ջուլհակյան |
| Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ | Վ. Հովակիմյան |
| Վարչական դատարանի նախագահ | Կ. Զարիկյան |
| Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ | Ա. Փաշինյան |
| Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ | Ա. Մարուխյան |
| Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ | Ե. Կարապետյան |
| Վարչապետի աշխատակազմի մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության պետ | Լ. Աֆրիկյան |
| ՀՀ ԱՆ հրավիրյալ փորձագետ, «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ» հասարակական կազմակերպության տնօրեն | Գ. Պետրոսյան |

## ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Նիստը բացեց՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) նախագահը՝ առաջարկելով սկսել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի օրակարգի քննարկումը: Միաժամանակ, սահմանվեց օրակարգային հարցերի քննարկման ընթացակարգը:

**Օրակարգային հարց** 1

**Նախընտրական քարոզչության սահմանափակումների՝ մասնավորապես վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի ուղեցույցի ներկայացում**

2. Զեկույցով հանդես եկավ Արդարադատության նախարար Ս. Գալյանը.

Ներկայացվեց «Վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելումը և կուսակցությունների ֆինանսավորումն ընտրական գործընթացներում» ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց): Անդրադարձ կատարվեց Ուղեցույցի կառուցվածքին և բովանդակային դրույթներին, մասնավորապես՝ ներկայացվեցին պաշտոնյաների և թեկնածուների նախընտրական քարոզչության մասնակցության կանոնները, իրավական պատասխանատվության միջոցները և այլ գործառույթներ:

**Օրակարգային հարց 2**

**«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի քննարկում**

3. Զեկույցով հանդես եկավ Արդարադատության նախարար Ս. Գալյանը.

Ներկայացվեցին կուսակցությունների ֆինանսավորման օրենսդրական և գործնական խնդիրների հաղթահարման ուղղությամբ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերով առաջարկվող լուծումները: Անդրադարձ կատարվեց երրորդ անձանց կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու, ինչպես նաև նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկության վերաբերյալ խնդիրներին:

4. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Խորհրդի նախագահն անդրադարձավ Ուղեցույցի հիմնական նշանակությանը և գործնականում վերջինիս կիրառմանը: Առաջարկեց պետական մարմինների օրինակով դիտարկել կուսակցությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում կուսակցությունների բարեվարքության հարցերով պատասխանատուների ինստիտուտի ներդրման հնարավորությունը:

2) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ա. Ջուլհակյանն անդրադարձավ նախընտրական քարոզչություն իրականացնողների վերաբերյալ սահմանափակումներին, մասնավորապես՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցների համար օրենսդրությամբ սահմանված նախընտրական քարոզչության սահմանափակումների շրջանակներին և ծավալին:

3) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանն անդրադարձ կատարեց Ուղեցույցին, ինչպես նաև ներկայացրեց նախընտրական քարոզչության սահմանափակումների վերաբերյալ գործնականում առաջացած խնդիրները, այդ թվում՝ Վաղարշապատ համայնքում տեղի ունեցած ընտրություններում ծագած գործնական խնդիրները:

4) Բարձրացված հարցի շրջանակներում իրենց դիտարկումները ներկայացրեցին Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Ա. Նահապետյանը, Արդարադատության նախարար Ս. Գալյանը:

5) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վ. Հովակիմյանը ներկայացրեց տեղեկատվություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) գործընկերների հետ համատեղ նախատեսվող վերապատրաստումների վերաբերյալ, որոնք կիրականացվեն տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների ղեկավար կազմերի համար ընտրությունների կազմակերպման գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով: Նշված վերապատրաստումների շրջանակներում նախատեսվում է նաև Ուղեցույցի ներկայացումը:

6) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցն անդրադարձավ Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվությունների արժանահավատության և տվյալների ամբողջականության ստուգման կառուցակարգերին. մասնավորապես՝ նշվեց թե արդյոք քրեական վարույթից դուրս հնարավոր է իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

7) Վարչական դատարանի նախագահ Կ. Զարիկյանը հարցադրում կատարեց երրորդ անձանց կողմից նախընտրական քարոզչության իրականացման վերահսկողության և խախտման հետևանքների վերաբերյալ:

8) Անդրադառնալով բարձրացված հարցերին՝ արդարադատության նախարար Ս. Գալյանը ներկայացրեց քրեական վարույթի շրջանակներից դուրս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիմումի հիման իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությանը: Անդրադարձ կատարվեց 2021 թվականին «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի շրջանակներում առաջարկվող «երրորդ անձ» հասկացությանը, երրորդ անձանց կողմից իրականացվող քարոզչության նկատմամբ իրականացվող վերահսկողությանը և պատասխանատվության մեխանիզմներին:

9) Անդրադառնալով երրորդ անձանց կողմից իրականցվող քարոզչության հարցին ԿԸՀ նախագահ Վ. Հովակիմյանը առաջարկեց առկա խնդիրների լուծումը դիտարկել քաղաքական գովազդի վերաբերյալ կառուցակարգերի հստակեցման շրջանակներում:

10) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս. Այվազյանը կարևորեց ընտրություններում թափանցիկությունը և հաշվետվողականությունը խթանող փոփոխությունների իրականացումը: Անդրադարձ կատարվեց «երրորդ անձ» հասկացության բնորոշմանը և հաշվետվության ներկայացման խնդիրներին:

11) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ա. Ջուլհակյանը ներկայացրեց դիտորդական առաքելության և քաղաքական գործունեության վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

12) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Վարդանյանն անդրադարձ կատարեց խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր օրենսդրական փոփոխությունների իրականացման ժամկետներին:

13) Փոխվարչապետ Մ. Գրիգորյանն անդրադարձ կատարեց քաղաքական ֆինանսավորման գործընթացում կրիպտոակտիվների նշանակությանը, առաջարկեց քննարկվող խնդիրների լուծման շրջանակներում դիտարկել վճարամիջոցի սահմանման փոփոխության հարցը:

14) Խորհրդի նախագահը հանդես եկավ եզրափակիչ ելույթով՝ առաջարկելով.

ա) շարունակել աշխատանքը՝ բարձրացված հարցերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ընդունելի լուծումներ գտնելու նպատակով,

բ) ներկայացված խնդիրների հաղթահարմանն ուղղված ընդունելի լուծման տարբերակներ գտնելու դեպքում, դրանք ըստ անհրաժեշտության ներկայացնել լրացուցիչ քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ


ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ